Օսմանյան կայսրության մեջ ջիզիեն գանձում էին մուսուլմանական տարվա սկզբին՝ մուհարրամ ամսին (հունիս—հուլիս)։

17-րդ դարում ջիզիեի գանձումը կատարվում էր հետևյալ կերպ. Ստամբուլում, գլխավոր դաֆթարդարի հրամանատարության տակ գտնվող ջիզիեի հաշվետարը «ջիզիե մուհասեբեջիսի»), պատրաստել էր տալիս կնքված պատրաստի թղթեր, որի վրա գրված էր լինում «պարտադիր ջիզիե» («ջիզիեի ջեբրան»)՝ ոչ մուսուլմանների համար։ Այդ թղթերը հանձնվում էին հատուկ պաշտոնյաներին՝ այսպես կոչված թահսիլդարներին, ջիզիեդարներին, որոնք գյուղերում քեթխուդաների (տանուտերերի), դատավորների (կադիների) օգնությամբ հավաքում էին ջիզիեները և հանձնում թղթերը։

Աղբյուրների վկայությամբ ջիզիեն հավաքող պետական պաշտոնյաները կողոպտում էին ժողովրդին՝ ջիզիեի հետ միասին այլ անուններով հարկեր գանձելով։ Հայտնի թուրք պատմաբան Աբդուրրահման Վեքիֆ բեյը այդ մասին գրում է. «Երբ պարզվեց, որ մուսուլմաններից ջիզիեի հետ միասին գանձում են մյուբաշիրիե[1], թահսիլդարիե[2], քեֆիլլեմե[3], «կոլեմ հակկը»[4] և այլ հարկեր այլ անուններով, ապա հիջրեի 1246 թ. (1830—1831), որպեսզի վերջ դրվի դրան, հատուկ որոշում ընդունվեց»։

Թուրքիայում գոյություն ուներ երկու տեսակի ջիզիե, «մաքտու ջիզիե» („maktu cizye"), այսինքն միանվագ և, «առ-ռուուս» („ar.—ruus") այսինքն ըստ գլուխների։

Առաջին տեսակի ջիզիեն գանձվում էր պատերազմում պարտված ոչ մուսուլմաններից, միանգամից, որոշակի գումարի ձևով։

Երկրորդ ու հիմնական ձևը հանդիսանում էր «առ-ռուուս» ջիզիեն, որը գանձվում էր բոլոր հարկատու ոչ մուսուլման հպատակներից, համաձայն նրանց նյութական դրության։ Ըստ այդմ էլ բոլոր հպատակները բաժանվում էին երեք հիմնական խմբի՝ աղքատների (էդնա, edna), միջակների (էվսաթ, evsat) և հարուստների («ալա, 'alâ), որոնք համապատասխան ձևով պիտի վճարեին՝ տաս, քսան և երեսուն ակչե[5]։

Սակայն պետք է նշել, որ ոչ ամենուրեք և ոչ ամեն ժամանակ նկատի էր առնվում այս սկզբունքը, այն հաճախակի խախտվում էր, տեղի տալով բացարձակ կողոպուտին։ Այսպես, ենի իլ (Սեբաստիայի նահանգ) քաղաքի 1583 թ. կանոն-նամեում ասված է, որ «տարբերություն չդնելով աղքատի, հարուստի ու միջակի միջև՝ յուրաքանչյուրից գանձում են 25-ական ակչե (ջիզիե)»[6]

---

[1] «Մյուբաշիրիե» („müba§iriye"), müba§ir, արաբերեն նշանակում է հսկիչ։ Հետևաբար «մյուբաշիրիե» ուղարկված հսկիչին վճարված գումարն է։

[2] «Թահսիլդարիե» („tahsildariye")— թահսիլդարի (ջիզիեն հավաքող պաշտոնակատարին) հանձնված գումարին տրված անունն է։

[3] «Քեֆիլլեմե» („Kefelleme"), «ջիզիե»-ն համայնքից գանձելու պատճառով, հարկի գանձումն ապահովելու համար տեղի «մուխթար»-ները վկա (kâfil) են լինում, և որի համար ստանում են որոշակի գումար։

[4] «Կոլեմ հակկը» („Kolem hakkı")— կոլեմ—ծառա է նշանակում։ «Կոլեմ» այստեղ պետության կողմից ուղարկված պաշտոնյան է։ «Կոլեմ հակկը»— «ծառայի իրավունք», այսինքն «ջիզիե»-ն գանձող պաշտոնյային տրվող գումարը։

[5] Yeni İl kanunu (*Om. L. Barkan* s. 83), տե՛ս նաև Վ. Ա. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ*, հատ. Բ., էջ 483։

[6] Նույն տեղում։